

ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ № 1

30 Դեկտեմբերի 2020թ. կնքված թիվ ԱԻՆ1964 պայմանագրի գործողությունը կասեցնելու մասին:

ք. Երևան

29 ապրիլի 2022թ.

ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Վանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Բաժանորդ, մի կողմից և «ՍՕՍ ՄԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Վահագն Ծատուրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Օպերատոր, մյուս կողմից, առանձին և համատեղ հիշատակման դեպքում այսուհետ կանվանվեն համապատասխանաբար Կողմ կամ Կողմեր, հիմք ընդունելով փոխադարձ համաձայնությունը և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերի միջև 30 Դեկտեմբերի 2020թ. կնքված թիվ ԱԻՆ1964 պայմանագրում /այսուհետ՝ Պայմանագիր/ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Հաշվի առնելով Կողմերի միջև 30 Դեկտեմբերի 2020թ. կնքված թիվ ԱԻՆ1964 պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/, ինչպես նաև ներօբյեկտային համակարգի անսարք լինելը՝ Կողմերը որոշեցին ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Բաթումի 3/2 հասցեում գտնվող Օբյեկտում Ծառայության մատուցումը կասեցնել 2022թ. Մայիսի 01-ից մինչև 2022թ. Օգոստոսի 01-ը:
2. Սույն Համաձայնագրի 1-ին կետում նշված ժամկետի ավարտից հետո ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Բաթումի 3/2 հասցեում ծառայությունների մատուցումը շարունակվում է նույն պայմաններով:
3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ:
5. Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բաժանորդ

Օպերատոր

ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Մխիթար Հերացի 12
Գործունեության հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ,
ք. Վանաձոր, Բաթումի 3/2
ՀՎՀՀ՝ 02625503
Հ/Հ՝ 900018004649

Կենտրոնական գանձապետարան
գլխավոր տնօրեն
/ Ա. Վանյան /

«Սոս Միսթեմա» ՍՊԸ
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Ահարոնյան 2
Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Ահարոնյան 2
ՀՎՀՀ՝ 02605138
Հ/Հ՝ 1930041816500100

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն՝
/ Վ. Ծատուրյան /

